ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.09.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/233

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13379-2021 գրությամբ «Գրիարտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.08.2021թ. թիվ 01/10119 գրության հիման վրա, 23.08.2021թ. թիվ 26/26-1/13379-2021 գրությամբ նախաձեռնել է «Գրիարտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գրիարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գրիարտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Գրիարտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/233 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Վանաձորի համայնքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2021թ. թիվ 01/10119 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, Ձեզ որ Վանաձորի համայնքապետարանի կողմից 03.08.2021թ. հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/74» ծածկագրով մրցույթի մասնակից՝ «Գրիարտ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ-07617837/ ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ:

«Գրիարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթում առկա են թվաբանական անճշտություններ:

Համաձայն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/74» ծածկագրով հրավերի 8.9-ի կետի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 12.08.2021թ. ժամը 11:00-ն, շտկել անհամապատասխանությունները և ուղղարկել gnumnervanadzor@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

«Գրիարտ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի շտկել ծավալաթերթերում հայտնաբերված թվաբանական անճշտությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը «Գրիարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/233 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/233 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/233 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքում աղբարկղների տարածքի ցանկապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/74» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Գրիարտ» ՍՊԸ-ն:

2. «Գրիարտ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է իր կողմից լրացված հետևյալ ծավալաթերթը.

հազ.դրամ

Հ/Հ	Աշխատանքի նկարագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը	Տեսակարար կշիռը
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կլոր ային հիմքերի համար	$մ^3$	0.96	2.837	2.723	
2.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով հատակների կառուցման համար	$մ^3$	0.80	3.119	2.495	
3.	Հատակի տակ խիճ նախապատրաստի կառուցում 10սմ	$մ^3$	0.80	2.516	2.013	
4.	Ամրանավորված բետոն հատակի կառուցում B12.5 բետոնով 10սմ հաստ.	$մ^3$	0.80	58,023	46,418	
5.	Ամրանային ցանց Br. d 4, 150x150	$մ^2$	8.00	1,348	10.783	
6.	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ավտոմեքենաթափ	$մ^3$	1.76	7,766	13,669	
7	Բնահողի տեղափոխում ա/մեքենաթափով մինչև 7կմ	տն	2.64	6,611	17,453	
8.	Հենապատների բետոնացում B7.5 մ.թ.	$մ^3$	0.96	45,699	43,871	
9.	Մետաղական էլեմենտների յուղանկում 2 անգամ	$մ^2$	5.80	2,336	13,551	
10.	Ցանկապատի մետաղական կարկասի կառուցում	տն	0.14	100,770	13,705	
11.	Սյուների պողպատե բուռակուսի խողովակ 60x60x3	մ	11.90	4,313	51,327	
12.	Հորիզոնական կապերի պողպատե ուղղանկյուն խողովակ 60x40x3	մ	14.60	3,979	58,100	
13.	Վանայ գույնի ցինկապատ պրոֆիլավոր թիթեղ K11-25 0.5մմ	$մ^2$	9.88	4,878	48,195	
14.	Ռետինե տափօղակով ցինկապատ պտուտակամեխ M5x80	հատ	70.00	0,071	4,942	
	Ընդամենը՝				329,245	100%
	9 հատ տարածքի համար				2963,205	

Ընդամենը՝ Երկու միլիոն ինը հարյուր վեցհազար երեք հազար երկու հարյուր հինգ դրամ

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթում առկա են թվաբանական անճշտություններ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 10.08.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.08.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Գրիարտ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի շտկել ծավալաթերթում հայտնաբերված թվաբանական անճշտությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13379-2021 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 17.08.2021թ. թիվ 01/10119 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված***

դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպես, Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքում աղբարկղների տարածքի ցանկապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/74» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Գրիարտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթում առկա են թվաբանական անճշտություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 10.08.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.08.2021թ. նիստի ընթացքում արձանագրել

է, որ «Գրիարտ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի շտկել ծավալաթերթում հայտնաբերված թվաբանական անճշտությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ «Գրիարտ» ՍՊԸ-ն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/74» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13379-2021 գրությամբ «Գրիարտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գրիարտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**